ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2020թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

«ԱՆՏԻՖԵՅՔ.ԱՄ» ԿԱՅՔԻ ԼՐԱԳՐՈՂ
ՍՈՆԱ ԱՄԻՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ամիրյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվական ապրիլի 20-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 7327) Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետը և մարզպետարանի աշխատակիցները 2020 թվականի առաջին եռամսակի ընթացքում պարգևատրվել են հունվար-փետրվար ամիսների համար:

Մարզպետարանի քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցները կիսամյակային հաշվետվությունների հիման վրա 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պարգևատրվել են ևս մեկ անգամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի: Պարգևատրման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» թիվ 1510-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան քաղաքացիական ծառայողների կատարողականների կիսամյակային գնահատականները:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ն. Մաղաքյան, հեռ. (0281) 2 55 95